ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Անչափահասների հանցավորությունն ամբողջ աշխարհում համարվում է ամենաարդիական սոցիալական խնդիրներից մեկը: Որպես կանոն, այն համարվում է ընդհանուր հանցավորության բաղկացուցիչ մասը, սակայն ունենալով մի շարք առանձնահատկություններ հանդես է գալիս որպես կրիմինոլոգիական հետազոտության ինքնուրույն օբյեկտ: Կրիմինոլոգիական հետազոտության տեսանկյունից անչափահասների հանցավորության առանձնացման անհրաժեշտությունը բացատրվում է մի շարք պատճառներով.

1.Աճող սերնդի կյանքի, առողջության և իրավունքների պաշտպանության խնդրի կարևորությամբ ու լայնածավալությամբ, դաստիարակման պահանջների իրագործմամբ, հոգևոր ու ֆիզիկական զարգացմամբ, աշխատանքի ու ֆիզիկական գործունեության նախապատրաստմամբ:

2.Նրանց կողմից կատարվող հանցագործությունների շարժառիթների ու նպատակների առանձնահատկությամբ պայմանավորված նրանց դաստիարակության ու ապրելակերպի յուրահատկություններով, անձնական, սոցիալական, հոգեկան և այլ հատկանիշների առանձնահատկություններով:

3.Հանցավորության կառուցվածքի ու մակարդակի առանձնահատկություններով, դրա պատճառներով ու շարժով, անչափահասների հանցավոր ակտիվությամբ: Նշված հանցավորության աճը կրում է բավականին կայուն բնույթ: Անհրաժեշտ է նկատել նաև, որ այն անձինք, ովքեր կատարում են հակահրավական գործողություններ վաղ տարիքում, հետագայում, որպես կանոն, համեմատաբար ավելի դժվարությամբ են կանգնում ճիշտ ուղու վրա:

Անչափահասների հանցավորության պատճառներին բնորոշ են ընդհանուր հանցավորության պատճառներ, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված նշված անձանց բնորոշ հանցավոր վարքի սոցիալ-ժողովրդագրական, հոգեբանական և դերային առանձնահատկություններով: Քրեագետների մեծ մասն անչափահասների հանցավորության հիմնական պատճառների թվին են դասում գործազրկությունը երիտասարդության շրջանում, երիտասարդների անվստահությունն ապագայի նկատմամբ, ժամանակակից միջոցներով հասարակության կառավարման անբավարարվածությունը և այլն: Անհրաժեշտ է նաև նշել, որ քրեագիտական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ անչափահաս իրավախախտների շրջանում մեծ թիվ են կազմում հատկապես առանց ծնողների մեծացած, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները:

Անչափահասների հանցավորության աճի օբյեկտիվ պատճառների շարքին են դասվում

ընտանիքում, դպրոցում և այլ մանկական հաստատություններում երեխաների դաստիարակության անբավարար պայմանները, նշված հաստատություններում դաստիարակչական աշխատանքներ տանող կադրերի թույլ նախապատրաստվածությունը, անչափահասների գործերով զբաղվող մարմինների աշխատանքի անբավարարությունը, մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեության ձևականությունը, որոնց վրա դրված է ընտանիքներում, դպրոցներում, մանկական, մշակութային և այլ կրթական հաստատություններում երեխաների ու դեռահասների դաստիարակությանը նպաստելու պարտականությունը:[1] Նշված իրավիճակի պատճառները միանշանակ չեն, դրանցից մեկը հենց այն է, որ անչափահասների հանցավորության կանխմանն ուղղված բազմաթիվ լավ մտածված նախագծեր արդյունք չեն տալիս, քանի որ դրանց իրականացումը համապատասխան կերպով չի վերահսկվում, դրանցում նախատեսված միջոցառումները գրեթե կյանքի չեն կոչվում, դրանց իրականացումը չի ապահովվում համապատասխան նյութական ծախսերով, ինչպես նաև անհրաժեշտ կադրերով:

Ինչպես վկայում են քրեագիտական հետազոտությունների արդյունքները՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների անմիջական պատճառներից են ծնողների ու ընտանիքի այլ անդամների բացասական օրինակի ազդեցությունը /մոտ 30-40 տոկոս/, մեծահասակների ազդեցությունը, ծնողների կողմից երեխաների անհրաժեշտ պահանջները նյութապես բավարարելու հնարավորության բացակայությունը, աշխատանքի կամ ուսման վայրից երկարատև բացակայելը և այլն:

Նշված պատճառների հետ հանցավոր վարքագծի վրա ազդում են նաև որոշակի պայմաններ, մասնավորապես, ընտանիքի և ուսումնական հաստատությունների կողմից անչափահասների նկատմամբ բավականաչափ ու անհրաժեշտ հսկողության բացակայությունը, դպրոցների ու այլ հաստատությունների աշխատանքի ցածր մակարդակը և այլն:

Այսպես, հնարավորություն չունենալով օրինական ճանապարհով բավարարել սեփական պահանջները, շատ անչափահասներ սկսում են «փող աշխատել» և իրենց ուժերի ու հնարավորությունների չափ հանցավոր ճանապարհով ձեռք բերել անհրաժեշտ իրեր ու մթերքներ:

Հանցավորության պատճառների գիտական հասկացության այսօրվա մակարդակը թույլ է տալիս ավելի հստակ ու ամբողջական սահմանել սոցիալական իրականության այն գործընթացներն ու երևույթները, որոնք առաջացնում են անչափահասների կյանքի ու դաստիարակության բացասական պայմաններ, որոնք նպաստում են նրանց կողմից հանցագործությունների կատարմանը:

Անչափահաս հանցագործների վարքի հոգեբանական պատճառաբանությանը նվիրված բազմաթիվ հետազոտություններում ապացուցված են մի շարք օրինաչափ երևույթներ, որոնք իրենց ակնառու արտահայտությունն են գտնում քրեադատավարական պրակտիկայում: Դրանցից առանձնացնենք մի քանիսը: Նախ, քրեահոգեբանները և քրեաբանները այն համոզմանն են, որ անչափահաս տարիքում ձեռք բերված ասոցիալ, հատկապես հակահասարակական փորձը հոգեբանական նախապայման է դառնում չափահաս տարիքում կայուն հասարակական ուղղվածության ձևավորման համար: Հանցավոր աշխարհում իրենց չարամտությամբ աչքի են ընկնում այն հանցագործները, որոնք ասոցիալ, քրեածին վարքի դիրքորոշումներ են ունեցել մանկական կամ անչափահաս տարիքում, ընկալունակ են եղել տարաբնույթ բացասական ներգործությունների նկատմամբ[2]:

Հաջորդ քրեահոգեբանական օրինաչափությունն այն է, որ սոցիալական և հոգեբանական սակավ արդյունավետ պրոֆիլակտիկայի կամ դրա բացակայության պայմաններում անչափահաս իրավախախտի քրեածին վարքի դիրքորոշումներն ամրակայվում են անհատական փորձով, գրեթե անարգել, աստիճանաբար առավել քրեականացվում: Յուրաքանչյուր նոր քրեածին արարքի անձի համար դրական արդյունքները որոշակիորեն հարստացնում են նրա փորձը, կատարելագործում գործելու մեթոդներն ու մեխանիզմները, պատասխանատվությունից խուսափելու հնարքները, դեգրադացնում բարոյական որակները, առավել ակտիվացնում արարքից սոցիալական սպասումները՝ առաջացնելով նոր պահանջմունքներ:

Վերջապես մի հույժ կարևոր սոցիալ-հոգեբանական օրինաչափություն էլ է արձանագրում, որն ավելի բարդ է, իսկ իմաստավորումն ու հաղթահարումը՝ սակավ հեռանկարային: Խնդիրը կայանում է նրանում, որ մեր հասարակական գիտակցության մեջ անչափահաս իրավախախտը կամ հանցագործը շատ անդաստիարակ երեխա է, որի վարքը առաջին հերթին տարիքային առանձնահատկությունների հետևանք է և այն կկարգավորվի հասունացման հետ մեկտեղ: Թե՛ հասարակությունը և թե՛ օրենսդիրն այս հանգամանքը հաշվի են առնում, և դժվար է ասել, նրանք սխալ են, թե իրավացի, համենայն դեպս այդպիսի մոտեցման մեջ հումանիստականը, մարդասիրականը գերակայում են: Այստեղ տեղին է ընդգծել, որ խնդիրը մարդասիրությունը և հանդուրժողականությունը չէ՝ երեխայի սխալ արարքների որակման և համապատասխանության չափի որոշման հարցում, այլ այն, որ ընդհանուր դրական մնայնությունը կարծես թե նսեմացնում է անչափահասների շրջանում իրավախախտումների և հանցագործությունների պրոֆիլակտիկայի անհրաժեշտությունը:

Հասարակության, պետության լուրջ մտահոգության խնդիր պետք է լինի ոչ այնքան անչափահասների շրջանում իրավախախտումների նախականխումը, որքան այն պայմանների ստեղծումը, որոնք ուղղված կլինեն ֆիզիկական և հոգեպես առողջ սերունդ մեծացնելուն, նրանց կրթության, հանգստի և ժամանցի ճիշտ կազմակերպմանը, նրանց նախասիրությունների զարգացման և ինքնադրսևորման հնարավորությունների ստեղծմանը, ընդհանրապես նրան հասարակության լիարժեք անդամ տեսնելը:

Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Բաբաևը. «Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների մեծ մասն ունի տարիքային մոտիվացիոն յուրատիպություն: Այդ իրավախախտումները կատարվում են չարաճճիության, խելառության, կեղծ հասկացված ռոմանտիզմի, հեղինակներին ընդօրինակելու հողի վրա[3]»: Օրինակ՝ դեռահասների առանձին գործողություններ, որոնք արտաքնապես նույնական են գողության, կողոպուտի և այլ հանցագործությունների հետ, իրենց սուբյեկտիվ կողմով հանցակազմ չեն ստեղծում, քանի որ չարաճճիության բնույթ են կրում:

Անչափահասների հանցավորության կանխման գործում սկզբունքային նշանակություն ունի պետական քաղաքականության երկու հիմնական նպատակների ընտրությունը: Մի կողմից, դա անչափահասների իրավունքների ու հետաքրքրությունների պաշտպանությունն է, իսկ մյուս կողմից՝ հասարակության պաշտպանությունը անչափահասների իրավախախտումներից ու հանցավոր ոտնձգություններից: Նշված նպատակների այսպիսի համադրումը թույլ է տալիս լուծել քրեագիտական ու իրավական պրակտիկային առնչվող բազմաթիվ հարցեր:

Անչափահասների հանցավորության կանխման համար պետությունը իրականացնում է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

-սոցիալական պրոֆիլակտիկա /կենցաղային, կրթության, աշխատանքի բնագավառում անչափահասների իրավունքների ու հետաքրքրությունների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ/,

-իրավական զսպում /պրոֆիլակտիկ նորմեր և իրավական դաստիարակման համակարգ/,

-կրիմինոլոգիական պրոֆիլակտիկա /հանցավորության պատճառների ու պայմանների թուլացմանը, չեզոքացմանը, խոչընդոտմանն ուղղված միջոցառումներ/,

-քրեաիրավական նախազգուշացում /քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական իրավունքի միջոցներով հանցագործությունների կանխում/, որի հիմքը նշանակված պատժի ճիշտ կիրառման ու կատարման ապահովումն է:

Հատկանշական է ընդգծել, որ անչափահասների հանցավորության կանխումը բաժանվում է հետևյալ տեսակների՝ վաղ, անմիջական, մինչհանցավոր վարքագծի նախականխման և ռեցիդիվի կանխման:

Վաղ նախականխումը նախատեսված է նրանց համար, ովքեր հայտնվել են կյանքի անբարենպաստ պայմաններում և ուղղված է այդ պայմանների չեզոքացմանը՝ նախքան դրանց բացասական ազդեցության անդրադառնալն անչափահասների վարքագծի վրա: Որպես կանոն, այն իրականացվում է անչափահասների ռիսկային խմբերի /որբերի, սոցիալապես անապահով ընտանիքների, դատա-

պարտված ծնողների երեխաների/ նկատմամբ իրավապահական ու հասարակական պաշտպանության, սոցիալական օգնության ու կյանքի պայմանների բարելավման և աջակցության այլ եղանակների իրականացման միջոցով:

Անմիջական կանխարգելման փուլը նախատեսված է այն անչափահասների համար, ովքեր կատարել են վարչական իրավախախտումներ կամ գտնվում են հաշվառման մեջ անչափահասների տեսչությունում: Տվյալ դեպքում, անշուշտ, վաղ կանխարգելմանը բնորոշ միջոցներից բացի, մեծանում է անչափահասների նկատմամբ ազդեցությունը՝ իրավական, դաստիարակչական առումներով, և հիմնական ուղղվածությունը պետք է լինի այն նախապայմանների հայտնաբերումն և չեզոքացումը, որոնց անմիջական ազդեցությամբ անչափահասը կատարել է այս կամ այն իրավախախտումը:

Ինչ վերաբերում է անչափահասների շրջանում ռեցիդիվի կանխմանը, ապա դա, ըստ էության, ներառում է մի շարք համալիր միջոցառումներ, որոնք ներառում են անչափահասների գործերով զբաղվող մարմինների, հասարակական կազմակերպությունների կողմից ցուցաբերվող իրավական ու նյութական օգնությունը, ազատազրկման վայրերից ազատված անձանց աշխատանքային ու կենցաղային աջակցությունը և այլն: Տվյալ պարագայում մեծ նշանակություն ունի նաև անչափահասի անձի վրա նախազգուշական ազդեցությունը, այսինքն՝ անհատական պրոֆիլակտիկան, որը պետք է ուղղված լինի ինչպես անչափահաս հանցագործի անձի, այնպես էլ շրջակա միջավայրի վրա[4]:

Անչափահասների հանցավորության կանխման համար նախ անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց անձը, որոշել ու չեզոքացնել նրանց վրա բացասական ազդեցության հնարավոր միջոցները, ստեղծել նպաստավոր մթնոլորտ, որը կխոչընդոտի հանցավոր մտադրությունների իրականացմանը, հնարավոր է իրականացնել նման անչափահասների վարքի ու ապրելակերպի վրա: Նշված տեսանկյունից կարելի է առանձնացնել նաև մի շարք ընդհանուր սոցիալական այնպիսի միջոցառումներ, որոնք պարտադիր պետք է ներառեն՝

- երեխայի առողջությանը հետևելը, այդ թվում ֆիզիկական, մտավոր և հոգեկան վիճակներին,
- ստեղծել ընտանիքի և անչափահասների իրավունքների ու հետաքրքրությունների պաշտպանության ու օգնության մշտապես գործող ծառայություններ, որոնք կտրամադրեն համապատասխան դրամական և այլ նյութական ու տեխնիկական միջոցներ, այդ թվում բնակելի տարածքներ, տրանսպորտային միջոցներ, օրվա ցանկացած պահի, ցանկացած վայրում, ամենակարճ ժամանակահատվածում ապահովվի ամենադժվար ընտանեկան խնդրի լուծման հնարավորությունը, անչափահասների իրավունքների ու հետաքրքրությունների պաշտպանության խնդիրները, օգնություն ցուցաբերվի այն երեխաներին, ովքեր ինչ-որ պատճառներով հեռացել են տնից կամ ուսումնական հաստատությունից:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ անչափահասները կազմում են մեր հասարակության ամենախոցելի մասը, նրանց նկատմամբ պետք է ցուցաբերվի հատուկ ուշադրություն՝ սկսած ընտանիքից, մինչև պետությունը պետք է հսկողություն իրականացվի անչափահասների ճիշտ դաստիարակման ու ապրելակերպի վրա, քանի որ շատ դեպքերում հենց վաղ հասակից է անձի մոտ ձևավորվում հակասոցիալական ուղղվածություն, ուստի պետք է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի ցանկացած իրավիճակում հայտնվելու դեպքում անչափահասի մոտ չծագի այդ իրավիճակից դուրս գալու համար հանցագործություն կատարելու մտադրություն:

---

1. Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период.

2. Արզումանյան Ս., Էլդա Գրիգ., Իրավաբանական հոգեբանություն., Երևան, 2004թ.

3. Бабаев М.М., Исследование возрастных психологических особенностей и проблема отвественности несовершеннолетних провонарушителей., “Сов.гос. и право”, 1963.

4. Ермаков В., Крюкова Н. Несовершеннолетние преступники., М., 1999.